



Լ. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԴԵՐՁԸ
«ԱՐՄԵՆԻԱ» ԱՌԱԳԱՍՏԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ
ՇՈՒՐՋԵՐԿՐԻՅԱ ԵՎ ԱՊԱՐՅՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի անդամներ «Մեսրոպ Մաշտոց» արշավախմբի,

Աստուծո օրհնությամբ Դուք բարեհաջող ավարտի հասցրեցիք «Արմենիա» առագաստանավի շուրջերկրյա ճանապարհորդությունը: Այս բերկրալի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարենաղթանքները:

Հաղթահարելով օվկիանոսների ու ծովերի բազմաթիվ դժվարություններն ու փորձությունները, Դուք անցաք հազարավոր կիլոմետրեր՝ առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը կատարելով մեր ժողովրդի պատմության մեջ: Լինելով Սփյուռքի մեր բազմաթիվ համայնքներում, Դուք հայրենի մեր երկրի ջերմությունը փոխանցեցիք հավատավոր հայորդիներին՝ ծառայելով Հայրենիք-Սփյուռք կապերի զորացման կարևոր գործին: Հիշարժան է նաև, որ շրջանցելով բոլոր վտանգները, դուք Հորն հրվանդանում տեղադրեցիք հայկական խաչ՝ ի հիշատակ մարդկության բոլոր անմեղ զոհերի: Աշխարհսփյուռ մեր ժողովուրդը հետևեց «Արմենիա» առագաստանավի ընթացքին, բոլոր հանգրվաններում աղոթելով ձեր ապահովության ու հաջողությունների համար:

Բարձր գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում «Մեսրոպ Մաշտոց» արշավախմբի ղեկավար, եկեղեցասեր և հայրենասեր հայորդի Տիար Զորի Բալայանին և բոլոր անդամներիդ՝ մեր երկրի ու ժողովրդի, հայ մշակույթի և հոգևոր մեր արժեքների հանդեպ դրսևորած նվիրումի համար: Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված օրհնի ձեզ առատապես և մշտապես զորավիգ լինի ձեր բոլոր բարի գործերին ու նախաձեռնություններին: